

ԱՐՄԱՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի իրավախորհրդատու,
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի
և քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և
մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԳԱԿԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

Սույն հոդվածում ներկայացվում են Սահմանադրական իրավունքի տեսության մեջ առկա հիմնախնդիրները: Նշվում են ժամանակի զարգացման ընթացքում Հիմնական օրենքի նկատմամբ պատկերացումների, մոտեցումների փոփոխությունների տրամաբանությունը: Հատուկ շեշտադրվում է սահմանադրական մշտադիտարկման միջոցով սահմանադրականության գնահատման նպատակային մեխանիզմի ներդրման անհրաժեշտությանը:

Հիմնարարը- Սահմանադրություն, սահմանադրական իրավունք, սահմանադրականության, սահմանադրական մշտադիտարկում, սահմանադրական անտեսագիտություն, սահմանադրականության գնահատում:

Իրավագետ Ե. Տանչևի կարծիքով. «Սահմանադրական նորմերի իրացումն ունի նվազագույնը երկու ասպեկտ: Մի կողմից, խոսքը գնում է սահմանադրական դրույթների իրականացման հնարավորության մասին՝ կախված հիմնական օրենքի տեքստում դրանց ունեցած տեղից ու իրավունքի այլ նորմերի բովանդակությունից: Մյուս կողմից՝ մեծ նշանակություն ունի այն հարցը, թե՛ արդյո՞ք սոցիալական իրականությունը թույլ է տալիս կատարել սահմանադրության բոլոր պահանջները»: Խնդիրը վերաբերում է նրան, որ սահմանադրությունը չվերաձվի ֆիկտիվ փաստաթղթի, որի առկայությունը հասարակությունը նույնիսկ չզգա: Ավելին, հասարակությունը պետք է ակտիվ գործադրի սահմանադրորեն հռչակված ազատությունները և իրացնի իրավունքները, միևնույն ժամանակ կատարելով համապարտադիր պարտականությունները՝ այսինքն, սահմանադրությունը պետք է դառնա իրական կյանքի մաս, որը կիրառվում է հասարակական հարաբերությունների ցանկացած ոլորտում: Իրական կյանքի սահմանադրության հետ ներդաշնակումը հայկական իրավական կյանքի ժամանակակից առանցքային խնդիրների շարքում է:

Հատկապես, հասարակական վերափոխումների պայմաններում, սահմանադրականության ձևախեղումները դառնում են անկայունության և սոցիալական կատակլիզմների հիմնական պատճառը²: Նոր խնդիրները պահանջում են նոր լուծումներ, որը կարող է իրականացվել անընդհատ և անխափան եղանակով սահմանադրական ախտորոշման հիման վրա գործուն և համակարգային

սահմանադրական մշտադիտարկման ինստիտուտի ներդրմամբ: Այդ ուղղությամբ հիմնական հայեցակարգային եզրահանգումներն են.

1) աշխարհում գործող սահմանադրական վերահսկողության և հսկողության մոդելները լիարժեք չեն ապահովում հասարակական պրակտիկայում խախտված սահմանադրական հավասարակշռության ժամանակին բացահայտման գնահատման և հաղթահարման համակարգային ու անընդհատ բնույթը, և ոչ լիարժեք են համապատասխանում ժամանակի մարտահրավերներին,

2) խախտված սահմանադրական հավասարակշռության ժամանակին չվերականգնումը բերում է բացասական հասարակական էներգիայի կուտակումների, ինչը, հավաքելով կրիտիկական զանգված, հանգեցնում է սոցիալական պայթյունի և անկայունության,

3) իշխանության ինստիտուտների մոտ սահմանադրության գերակայության երաշխավորման հարցում առկա չէ գործառույթների իրականացման համակարգային ու օրգանական փոխկապակցվածություն,

4) քանի դեռ պետությունը չի ճանաչել ու չի երաշխավորել մարդու սահմանադրական արդարադատության իրավունքը, անհնարին է իրականում ապահովել իրավունքի գերակայությունը,

5) սահմանադրական վերահսկողության համակարգվածությունն ու անընդհատությունը հնարավոր է միայն սահմանադրական ախտորոշման և մշտադիտարկման շարունակական գործող ու ամբողջական համակարգի ներդրման պարագայում:

Վերջին դրույթը ենթադրում է, որ նախորդ

www.journal.lawinstitute.am

դրույթների առումով պետք է գտնվեն համարժեք իրավական լուծումներ, որպեսզի ներդրվի այդ համակարգը: Այստեղ ելակետային նշանակություն ունի համակարգային ու անընդհատ գործող սահմանադրական մշտադիտարկման կառուցակարգային ու գործառնությանի սպահովման բովանդակության բացահայտումը:

Սահմանադրական մշտադիտարկման ինստիտուտի ներդրման գաղափարը դիտարկվում է նաև միջոցառումների գիտության մակարդակով, քանի որ այն ուսումնասիրվում է նաև տնտեսագիտության կողմից: Ինչպես նշում է պրոֆեսոր Հ. Սարգսյանը. «Սահմանադրական մշտադիտարկումը, նախ և առաջ, մուտք է սահմանադրական տնտեսագիտություն»³: Պատահական չէ, որ երկու ոլորտները այս պարագայում կապվում են իրար: Ժամանակակից զարգացումները բերում են նրան, որ յուրաքանչյուր փոփոխություն, տրանսֆորմացիա, որ տեղի է ունենում հասարակության կյանքում՝ ուսումնասիրության առարկա է դառնում նաև տվյալ գիտության ոլորտի կողմից: Սահմանադրական տնտեսագիտությունը վերջին տասնամյակներում դարձել է տնտեսագիտության ամենաարագ զարգացող ուղղություններից մեկը: Դրա մասին են վկայում նաև բազմաթիվ հրատարակումները, մասնավորապես՝ Constitutional political economy⁴, ինչպես նաև՝ միջազգային լայնամասշտաբ մասնագիտացված տվյալների շտեմարանների ստեղծման ծրագրերը:

Սահմանադրական կարգավորման առարկա է հանդիսանում ամբողջ տնտեսությունը, ինչպես նաև տնտեսական հարաբերությունները, որոնց հետազոտությունը և արդյունավետ լուծումների առաջադրումը կարող է իրականացվել՝ գնահատելով սահմանադրականության մակարդակը: Հարկ է նկատել, որ բազմաթիվ երկրներում սահմանադրականության մակարդակը բավական ցածր է, նման հանգամանքը ազդում է նաև երկրի ամբողջ տնտեսության վրա՝ դանդաղեցնելով դրա աճը: Ընդ որում, այդ թերությունների աղբյուրը տնտեսության կառավարման ոչ պատշաճ մակարդակի սպահովումն է, որի անհրաժեշտ կարգավորման նպատակով մեխանիզմների կիրառումը տեղափոխվում է իրավական դաշտում համապատասխան լուծումներ ամրագրելուն:

Ժամանակակից պայմաններում տնտեսական ճիշտ քաղաքականության ընտրությունը մեծապես կախված է սահմանադրականության դեֆինիցիոն բացահայտման, դրա բաղադրությունից և կառուցվածքից, մուլտիպլիկատիվ արդյունքից և դրա տնտեսության վրա ազդեցության փոխանցման մե-

խանիզմներից, գործառնությանի և ինստիտուցիոնալ շրթայում գործառնության-ինստիտուտ, լիազորություն-պատասխանատվություն՝ բոլոր կառավարական մակարդակներում օպտիմալ կառավարման համակարգ ներդնելուց⁶:

Նկարագրված խնդիրների կարգավորման հարցում տնտեսական-մեթոդաբանական հիմքում կարող է դրվել սահմանադրական տնտեսագիտությունը: Այսպես, համաձայն Բյուկենենի. «...սահմանադրական տնտեսագիտությունը ուսումնասիրում է (սահմանադրական) գործող կանոնների հատկանիշները, այն ինստիտուտները, որոնց շրջանակներում անհատները ազդում են այն ընթացքների վրա, որոնց միջոցով այդ կանոնները և ինստիտուտները կայանում և ընտրվում են»⁷:

Սահմանադրականության գնահատականը կարելի է պարզել որպես սահմանադրականության դեֆինիցիոն, ձախողումների չափսերը պարզելու ընթացք, որի հիմքում կատարվում է տնտեսական իրավական ընթացքների և դրանց կառավարման մշտադիտարկում: Սահմանադրականացման գործընթացը սկսում է գնահատականի, սահմանադրականության մակարդակի չափազանցումից և բխեցնում է դրա կառավարման հետ կապված գիտամեթոդաբանական մոտեցումների առաջադրմանը: Այդ մոտեցումներից մեկը ենթադրում է սահմանադրականության գնահատումը սոցիալ-տնտեսական բնութագրիչների միջոցով: Գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև իրավական պետության և ժողովրդավարական զարգացումների բնութագրիչների բազմազանությունը⁸:

1. *Իրավական պետության բնութագրիչների շարքին կարելի է հատկացնել հետևյալ խումբը.*

- իրավունքի գերակայության երաշխավորման անհրաժեշտ և բավարար նախադրյալների առկայությունը,
- սահմանադրության գերակայության սպահովման երաշխիքները,
- իշխանությունների իրական տարանջատման բնութագրիչ,
- դատական իշխանության իրական անկախության աստիճանը,
- քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման աստիճանը,
- օրենքի առջև բոլորի իրական հավասարության աստիճանը,
- կոռուպցիայի մակարդակը,
- ստվերային տնտեսության մակարդակը,
- ժողովրդի իրավագիտակցության մակարդակը,
- կրիմինալ իրավիճակը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2. Ժողովրդավարական զարգացումների բնութագրիչներն են.

- պառլամենտարիզմի զարգացման մակարդակը,
- ընտրական համակարգի հանդեպ վստահության աստիճանը,
- քաղաքական կուսակցությունների կայացման աստիճանը,
- մամուլի ազատությունը,
- ինտերնետի ազատությունը,
- հավաքների ազատությունը,
- միավորումների ազատությունը,
- քաղաքացիական ակտիվության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման մակարդակը,
- իշխանության ինստիտուտների գործունեության թափանցիկությունը,
- պետական ժողովրդավարական ինստիտուտների գործունակության մակարդակը,
- կրոնական ազատությունները,
- ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանվածության աստիճանը,
- բազմակարծության մակարդակը,
- հանդուրժողականության մակարդակը,
- անխտրականության մակարդակը:

3. Սոցիալական բնութագրիչներն են.

- գործազրկության մակարդակը,
- միգրացիայի մակարդակը,
- զմեռի կայունության մակարդակը (արժեքկումը),
- բնակչության մեկ շնչի հաշվով ներքին համախառն արդյունքի միջին տարեկան աճը,
- կենսամիջինումի և նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը,
- կենսաթոշակի և միջին աշխատավարձի հարաբերակցությունը,
- մտավոր ստեղծագործական աշխատանքի սոցիալական պաշտպանվածության մակարդակը,
- նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից ցածր եկամուտ ունեցող բնակչության բաժինը 100 հազար բնակչի հաշվով,
- բնակչության տոկոս ամենահարուստների տարեկան եկամուտների հարաբերակցությունը և հետ, ամենացածր 90 տոկոսի տարեկան եկամուտների հետ,
- երկրում տարեկան սոցիալական ոլորտին հատկացվող բյուջետային միջոցների հետ 10 տոկոս ամենահարուստ անձանց եկամուտների հարաբերակցությունը,
- տվյալ տարում հայտարարագրված ընդհանուր եկամուտների հետ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ոլորտների պաշտոնա-

տար անձանց աշխատավարձի հարաբերակցությունը,

- երկրում միջին աշխատավարձի հետ քաղաքական լիդերների հայտարարագրված տարեկան եկամուտների հարաբերակցությունը,
- բարձր ղեկավար պաշտոններ զբաղեցնողների ու քաղաքական էլիտայի ունեցվածքի դինամիկան նրանց կողմից պետական պաշտոններ զբաղեցնելու տարիներին:

Ներկայացված բնութագրիչները սպառնիչ չեն, հետևաբար, ժամանակի ընթացքում ենթակա են փոփոխման, ավելացման կամ նվազման: Կարելի է փաստել նաև, որ բնութագրիչների ընտրությունը որոշում է հետազոտության ուղղությունը, ուստի անհրաժեշտ է ի սկզբանե կանխատեսել դրանց ընտրության ծավալը և խմբավորումը, ըստ ոլորտների, քանզի սահմանադրությունները պարունակում են բազմաթիվ նորմեր, որոնց կիրառման վերլուծությունը պահանջում է բավական երկարատև աշխատանք: Առաջարկվող մոտեցումը թույլ է տալիս համակարգային գնահատել սահմանադրականության վիճակը երկրում, այդ իսկ հարթությունում ամրագրվում է նաև սահմանադրականության դեֆիցիտի հնարավոր մակարդակը, ինչը թույլ է տալիս մշակել հատուկ մեթոդաբանություն, միջոցառումների ծրագրեր և գործուն մեխանիզմներ դեֆիցիտի վերականգման նպատակով: Պրոֆեսոր Հ. Սարգսյանի կողմից Երևանի միջազգային գիտա-ժողովում ներկայացվել է սահմանադրական ախտորոշման միջոցով սահմանադրականության գնահատման մեխանիզմ, որի համաձայն ուսումնասիրվել է վերը նշված 3 խմբի որոշ բնութագրիչներ, ուսումնասիրությունը կատարվել է թվով 28 երկրների մակարդակով: Ընդ որում, հարկ է նշել, որ ցուցանիշների ամփոփ տվյալներ յուրաքանչյուր երկրի մակարդակով կարելի է գտնել ամերիկյան ազատության տան (freedom house), Համաշխարհային բանկի, Transparency international և ՄԱԿ-ի մարդկության զարգացման ինդեքսի տվյալների շտեմարաններից: Սահմանադրականության կայացման ընթացքի մոդելավորման և կառավարման մեջ օգտագործվել է կլաստերային և դիսկրետ մոդելավորումը:

Կլաստերային վերլուծությունը բազմաչափ վիճակագրական վերլուծության մեթոդ է, որը թույլ է տալիս միասեռ օբյեկտները դասակարգել և խմբավորել ավելի փոքր խմբերում: Ընդ որում, միասեռ օբյեկտները խմբավորվում են այնքան, մինչև չի ձևավորվում երկու կլաստեր: Ընդհանուր վերլուծությունը կայանում է հետևյալում.

- 1) երկրների որոշում,

- 2) մշտադիտարկման ժամկետ,
- 3) բնութագրիչների ընտրություն,
- 4) սահմանադրականության ինտեգրալ մակարդակի հաշվարկում,
- 5) կլաստերային վերլուծության մեթոդի ընտրություն,
- 6) դիսկրետ վերլուծություն,
- 7) որակական ամփոփ գնահատում,
- 8) արդյունքների մշտադիտարկում:

Դիսկրետ վերլուծությունը ենթադրում է ախտորոշման կամ փորձնական թեստ, որտեղ որոշվում են՝

- բնութագրիչների տեղեկատվական կշիռը (կարևորություն, ուսումնասիրվող օբյեկտի վրա ազդեցությունը),
- երկրի տեղեկատվական կշիռը, որի միջոցով օբյեկտները կարող են դասակարգվել կլաստերների:

Կլաստերային վերլուծության նվազ կարևոր հիմք է հանդիսանում սոցիալ-տնտեսական մակրոցուցանիշները: Այն երկրները, որոնք մոտակա տասնամյակներում համեմատաբար այլ երկրների հետ հավասար պայմաններում կկարողանան ռադիկալ սահմանադրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ կատարել՝ կկարողանան ապահովել որակական տնտեսական աճ: Սահմանադրականության ուսումնասիրության այնպիսի օբյեկտներ, որոնք են իրավունքի գերակայությունը և ժո-

ղովրդավարությունը կարելի է ուսումնասիրել այս հարթակի շրջանակներում: Առավել մեծ տեղեկատվական աղբյուր է հանդիսանում այն, որ մեթոդաբանությունը թույլ է տալիս բացահայտել թերությունները և պետական քաղաքականության կառուցման ժամանակ հաշվի առնել մշտադիտարկման արդյունքները: Ընտրելով բնութագրիչները և ուսումնասիրելով դրանց իրացվելիությունը (առկայությունը կամ բացակայությունը)՝ կարելի է հասկանալ տվյալ խմբի ամբողջական պատկերը, մասնավորապես, եթե երկրում առկա է անվստահություն իրավական համակարգի, պետական մարմինների նկատմամբ, աճում է արտագաղթի մակարդակը, ապա կարելի է սահմանել, որ խոսքը վերաբերում է իրավունքի գերակայության և սոցիալական բնութագրիչների խմբերին: Հետևաբար, իրավական հոշակած ցանկացած պետություն, ուսումնասիրելով առկա խնդիրները և դրանց նկատմամբ օգտագործելով պարադիգմալ այդ մոտեցումները հնարավորություն է ձեռք բերում առաջարկել հստակ նպատակային լուծումներ, չսպասելով դրանց բացասական էներգիայի կուտակման արդյունքում հնարավոր զարգացումների ճակատագրական հետևանքների առաջացմանը:

¹ Евгений Танчев. Социальное государство (всеобщего благосостояния) в современном конституционализме // Сравнительное конституционное обозрение. 2007, N4. С. 63.

² Հարությունյան Գ.Գ. - իրավաբանական գիտ. դոկտոր, պրոֆեսոր «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» (խմբ. Գ. Գանիելյան, Ռ. Ավագյան, Կ. Սիրումյան). - Վերահրատարակություն՝ (լրամշակումներով) - Եր.: Նժար, 2016թ., 431 էջ:

³ <http://concourt.am/armenian/almanakh/almanac2016/almanac2016.pdf> էջ 78:

⁴ <http://link.springer.com/journal/10602>

⁵ Comparative Constitutions Project’s (CCP), Available at: <http://www.comparativeconstitutionsproject.org>.

⁶ <http://concourt.am/armenian/almanakh/almanac2016/almanac2016.pdf>, էջ 79:

⁷ Buchanan, James, M., (1990) The Domain of Constitutional Economics, Constitutional Political Economy, Vol. 1, No. 1, p. 49.

⁸ Հարությունյան Գ.Գ. «Սահմանադրական մշտադիտարկում», Եր.: Նժար, 2016թ., էջ 90 :

⁹ Հարությունյան Գ.Գ., Սարգսյան Հ.Լ., Գևորգյան Ռ.Ա. «Սահմանադրություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ», Երևան, 2017թ.: Актуальные проблемы экономической теории и практики: сб. науч. тр. / под ред. В.А. Сидорова. Краснодар: Кубанский гос. ун-т, 2015, С. 33.

Арман Степанян

Аспирант кафедры конституционного и муниципального права института права и политики Российско-Армянского (Славянского) университета, юриконсульт центрального банка Республики Армения

РЕЗЮМЕ

Конституционный мониторинг в вопросе оценки уровня конституционализма

В данной статье представлены современные проблемы теории конституционного права. Указывается о логике изменений представлений и подходов об Основном законе в процессе развития времени. Особый акцент делается на необходимость введения механизма оценки конституционности посредством конституционного мониторинга.

Ключевые слова: Конституция, конституционное право, конституционализм, конституционный мониторинг, конституционная экономика, оценка конституционности.

Arman Stepanyan

PhD student at the Institute of Law and Politics
of the Department of Constitutional Law and
Municipal Law Russian-Armenian University
Central Bank of the Republic of Armenia, legal counsel

SUMMARY

Constitutional monitoring in the issue of assessing the level of constitutionalism

This article presents modern problems of the theory of constitutional law. It indicates the logic of changes in views and approaches to the Basic Law in the process of time development. Particular emphasis is placed on the need to introduce a constitutionality assessment mechanism through constitutional monitoring.

Key words: Constitution, constitutional law, constitutionalism, constitutional monitoring, constitutional economy, constitutionality assessment.